

Հ. Գ. ԻՆԳԼԻՍ. Խեցիներ ժողովող Սիեօր Գօգօլֆի սլանդիտուլթիւնը. Անգլիերէնից թարգմ. Աշոտ Բալեան-դրեան: Էջ. 26.

Նրկար վերնագիր կրող այս փոքրիկ գրքոյկը պարունակում է մի շարք արկածների վիպական պատմութիւնը, որ ոչ մի առանձին հետաքրքրութիւն չէ զարթեցնում ընթերցողի մէջ: Ոչ մանկական է, ոչ էլ շափահասների համար, պէտքական դիտական օգուտ չի կարող տալ գրքոյկիս ընթերցանութիւնը, բարոյագիտական գաղափարներ էլ չէ պարզում. Թարգմանիչն անգլիերէն լեզուն գիտենալով՝ միթէ սրանից աւելի լաւ բան չգտաւ անգլիական գրականութեան մէջ: Գուցէ առաջին փորձն է այս: Պ. Բայեանդրեանի հայերէնը նոյնպէս մի փոքր կաղում է. «ոչ մի քայլ չեմ արել իմ ապագան հայթայթելու համար. ինչ կանեմ, երբ իմ քսակը կը դադարկի»: «Հայեցարան կուղարկեն»: «Սա կարճ ժամանակում՝ լաւ էք կազմել». «Թանձր խաւարը և գերեզմանական լուծիւնը տիրեց քաղցած խորքի կրծքի վերայ», «ես պառկեցի փոքրիկ նաւի հիմքի վրայ» և այլն:

Գ. Ե. Անգործ կանայք. I. Աշխէն. Էջ. 68.

Այս վիպական փոքրիկ պատկերը գուրկ չէ հոգեբանական մոմէնտներից, բայց մեծ մասամբ անորոշ գրութեամբ: Աշխէնի տիպն իւր հոգեկան յուզումների արտայայտութեամբ շատ անգամ տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ. խոստովանութեան նկարագիրն արհեստական է: Սէլվեանի զգայմունքների մաքառման հիմքը խախտւում է թւում. չափազանցացրած և անբնականութեան հասցրած տեսարաններ կան: Անսովոր, նոյնիսկ, կարող ենք ասել, իրականութեան մէջ պատահող դէպք չէ, որ հայրն իր նախկին սիրային արկածներն ու հոգեկան յուզումները մտնրամասն պատմէ որդուն: Որդին, որ պատմութեան սկզբում դեռ անչափահաս, դպրոցական տղայ է, բարձր բարոյական գաղափարների մասին դատողութիւններ է տալիս և իւր հօր ու նրա տարփածուի յարաբերութիւնների մասին է խօսում շարունակ ու մտաւանջւում: Եւ ինչ կարիք կար անպատճառ որդուն պատմելու. պատկերն աւելի բնական կերպարանք կստանար, եթէ որդու տեղը մի բարեկամ բռնէր: